Նարեկ Սարգսյան

Ուղեղիս զգացմունքային կենտրոնում

Գեղեցկադեմ պատկերդ խցանվել է

Ուղեղիս զգացմունքային կենտրոնում,

Փորձում եմ քեզ մոռանալ

Բայց դեռ չի ստացվում:

Սթափ միտքս ասում է,

Որ դու ինձ տառապանքից բացի

Ոչինչ չես բերելու:

Բայց դե սիրտս կամակոր

Երեխայի պես չի հասկանում

Ու քո անունն է տալիս:

Սիրտս նեղացել է ինձանից,

Որ քեզ չեմ գրում, չեմ զանգահարում,

Չեմ փորձում քեզ հանդիպել ու համոզել:

Չի հասկանում, որ այդ ամենն անիմաստ է:

Չի ուզում հավատալ,

Որ քո հարցում սխալվել է:

Չի կարողանում հաշտվել այն մտքի հետ,

Որ մենք միասին լինել չենք կարող:

Ձեռքս դնում եմ սրտիս ու ասում նրան,

Որ ես պատրաստ եմ տալ նրան

Այն հոգատարությունն ու սերը,

Ինչի կարիքը նա ունի,

Եվ որ պետք չէ երջանկություն

Մուրալ այլ մարդուց:

Կսփոփեմ սրտիս,

Ձեռքով կշոյեմ նրան:

Ինքս կդառնամ սիրո կրակ՝

Ջերացնելով սիրտս,

Ու հետո կտեսնեմ, որ դու էլ չկաս

Իմ ուղեղի զգացմունքային կենտրոնում:

Դու որպես սառը հիշողություն

Տեղափոխվել ես իմ ուղեղի պահեստ,

Պահեստ, ուր ցուրտ է,

Չկա զգացմունք ու հուզական լիցք:

19 . 09 . 2026

Մեղրի